

Հուլիսի 1-ին սիրոյ տագնապը նրա յաղթած արգելքների մեծութիւնը համոզում է մեզ, թէ ինչքան գնահատում է հայը այդ երկնային պարգեւը: Թող կարգան այս պարզ վէպին այն մարդիկ, որ հայի մէջ միայն նիւթականի սէրն են դանդաղում:

Այս գեղեցիկ ժողովրդական վէպիկը պատմել է Խարբերդի կողմից Խամայէլ զիւղից գաղթած Սինաս բարարը:

Այս ամառ երբ հետաքրքրութեամբ ուսումնասիրում էի Պ. Ս. Հայկունու գրականական ժողովածուն, իսկոյն աչքիս ընկաւ այս վէպիկն իւր նորաձեւութեամբ: Այդ մասին մի հարեանցի տեղեկութիւն տուի «Արձագանք» թերթին: «Արձագանք» այդ յօդուածը շարժել է մի հայ գրասէրի հետաքրքրութիւնը և նա նպաստ էր ուղարկել թէ Պ. Հայկունի շարադրութիւնների տպագրութեան և թէ Սինաս բարարի համար: Երբ այդ առատաձեռն հայի նուէրը տալու համար ութսունամեայ Սինաս բարարին կանչեցի, պէտք էր տեսնել նրա զարմանքը: Խեղճ հայ, նա վարժուել էր արգէն, որ արհամարհանքով վերաբերուէն դէպի Հայ քաղը: Հայի լեզուն: Երգը. — Այժմ ամէնքը թուրքերէն խաղ կը կանչեն, հայի բառ չեն ուղեր, իմ տղայութեանս ժամանակ ուրիշ էր, հայերէն կը պատմէին, հայերէն կերգէին... երբ ես հայերէն կը պատմէի չէին լսեր, շատ բան մոռցեր եմ այժմ... Հառաչածայն ընդհատմամբ զանգատուում էր Սինաս բարար: Օգուտ քաղելով առթիւ պատմել տուի կրկին «Հուլիսի»-ը և մի քանի նորութիւններ լսելուց յետոյ, խնդրեցի Պ. Հայկունուն կրկին գրի առնել, որ և կատարելով այդ խնդիրն, ահա տպագրում է այն ձևով ինչ ձևով լսել է Սինաս բարարից: Վարդացողները կը նկատեն անշուշտ թերի մասերը, բայց դարձեալ ընդհանուր առմամբ սա մի ամբողջութիւն է, որ յանձնարարում ենք հայ գրագէտներին, թերեւս կարելի լինի մի աւելի լաւ վարիանտ գտնել:

Վէպին լեզուն ևս աղաւաղ է, որովհետեւ պատմողն երկար օտարութեան մէջ մընալով խառնել է իւր լեզուն:

Այսինքն վէպիկների լեզուն թէպէտ և տաղաչափական է լինում սովորաբար ինչպէս օրինակ բոլոր քրդական վէպերի լեզուն է, բայց մեր պատմողն հազիւ միայն տեղ տեղ ճիշդ լեզուն և չափը պահած լինի Պ. Հայկունին կարծ տողերով է գրի առել, հետեւելով պատմողի ընդհատումներին:

Ս. Բ.

Հ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ի Կ

Ե Ի

Ս Ա Մ Է Լ Հ Ո Վ Ի Կ

Ա.

Սալաթիա ծերունի մարդ մը կըլլի, էաս մարդը շատ աղքատ, տուչիւն կըլլի, Իրեք հատ աղջիկ կունենայ, Մէ հատ էալ թօփալ օխշար (այծ) կունենայ, Աղքատը կերթըր փէատ կը բերէր, Քաղաք տանէր կը ծախէր, Հաց կը գնէր, տուն կը տանէր, Աղջկներուն կուտեցնէր, — Որդի, բւրց մէկ օր, Դուք իրեք հատ աղջիկ էք, Մէկ թօփալ օխշար ունիք, Էլլէրին (այլոց) սիրելն լեառը կարծուի, Զեր էաս թօփալ օխշարը փոխուէն չէլլր, Էրկու մեծ աղջկներ պատկերուն ըսին, — Բարար, մենք դէրտ չունինք, Բու թօփալ օխշարը տի տանինք, արծինք, Մենք ալ ըսինք թէ, Զըհար բարարը մեզի ճիղմէ բան տի բերէ, Մարդը մէկ օր էալ օրթանձա աղջկան բւրց, Էան էալ էան լմանը բւրց, Մէկալ օրը չարէն կըյրաւ, Պղտիկ աղջկան ըսաւ, — Աղջիկս, քիզի բան տի ըսիմ, — Ըսէ, բարար (հայր), — Որդի, տի ըսիմ, Բըրըւտոցդ պէս ալիքս անդեւս վախիմ, — Զէ, բարար, ես պղտիկ իմ, Բըրըւտոցս պէս չիմ, Ինչ օր ըսիս, քիզի մտիկ կինիմ, Ըսիս ջուրը ընկիր, կերթըմ կըյնիմ, — Որդի, օր թէ քըրըւտոցդ պէս չիս, Օր իմ խօսքին մտիկ կինիս, Թօփալ օխշարը կը տանիս կարծիս, — Բարար, կերթըս ինծի մէ ջուխթ չարոխ կառնիս, Բօլոզ մի, կաղնի լաւ դէյնէկ մի կըբերիս, Վրու մի լաւ քէէէ կը գտնես, Մի շատ լաւ խաւալ (սրինգ) կառնես, Բարարը էլաւ գնըց, Զարոխը, քոլօզը, դէյնէկը բերըց, Բէէէն էալ գտաւ, առաւ բերաւ, Աղջիկ չարոխը հագաւ, Բօլոզը գլօխը զարկաւ, Բէէէն էալ միան առաւ:

Դէյնէկն էալ ձեռաբը առաւ,
Բարարն էալ օխարը հանեց,
Աղջկան առջին խառնեց,
— Տէ, աղջիկս, ըսրց, գնա՛,
Օխարը լաւ արծա՛,
Զիմ տանիր, բարար, ըսրց աղջիկը,
— Ինչո՞ւ չես տանիր,
Զէ, խոտացար տանիս,
Ես քիզի չըսի «ալիքս տի անդգես»,
— Քեզի ըսի «խաւալ մի բեր»,
Պապը օլրտաւ (պտտեց). խաւալ մի գտաւ,
Առաւ բերաւ, աղջկանը տուաւ,
Աղջիկ ջանժան լեցոց աղը,
Առնակը կապեց հացը,
Խաւալը առաւ ծամփայ ընկաւ,
Պղտիկ զաղար մի ունէր անունը Մըճան էր
Լեղուն կը հասկընար, առաւ հետը,
Ըսրց—բարար, մնըս բարի,
— Աստուած բանդ յաջողէ, էրթըս բարի,
Աղջիկը մի սահաթուան տեղ տարաւ,
Օխարը փախաւ էկաւ,
Իրեք անգամ տարաւ,
Իրեք անգամ էալ փախաւ էկաւ,
Աղջիկը ածրղաւ,
— Գլխուս ըէալա փէյտայեցի, ըսաւ,
Յետի սողը գընըց, մեշի ծառը կապեց,
— Աղը օ բերի, ինչ բանի համար է, ըսրց,
Խաւալը ջուրը թաթխեց, աղը վրան ցանեց,
Օխարին բերանը տուեց,
Օխարը աղը կըլզէր, յետին կը վազէր,
Արծէլէն լզելէն մի աւուր ծանփայ գընըց,
Ինքը խաւալը փշելէն կը գընըր,
Օխարը ետեուն արծելէն կէրթըր,
Աղջիկը տունը տեղը մառցաւ,
Գնըց մենձ լեռան տակ հասաւ,
Իրկուն էղաւ մթնեցաւ, աղջիկը քնացաւ,
Օխարը գետինը փորեց, քովը պարկեցաւ,
Աղջիկը տահա քնուկ էր,
Օխարն էալ նստաւ կործայ,
Գէալը խոշոր խոտ բերանը առեր էր
Գետինը սիւրիւմիշ լլլելէն կուգար,
Օխարը օտօք դարկեց աղջկան,
Աղջիկ արթնացաւ, օտաց վրայ կայնաւ,
Գէալը փախաւ,
Առաւօտը աղջիկը էլաւ, օխարին աղ տուաւ,
Լեռան մատնիվեր տնկուաւ,
Կէսը օ էլաւ, Պաղ ջուրը տեսաւ,
Ջուրը թնթե ու բարակ էր,
Վըլացուաւ, օխարը ջրեց ու նստաւ,
Հացը կերաւ, էլաւ կայնաւ,
Լեռան արեցամթին թարափը հայեաւ,
Հատ սիւրիւ, մագի (ոչխար) տեսաւ կարծ-
ուին,

Գուգան գէալի իղին (իւր կողմն),
Խաւալը առաւ բերանը, փշեց,
Անցոց մառցը,
Հատ չէ էն մագիստանուց դայ տասը,
Ինձի բոլ է,
Բաշլայեց ինձէ փերտէն (կակուղ եղանա-
կաւ) փշեց,

Մագիստանը գետնէն գլխին վերուցին,
Գէալի արեւատըր (արեւմուտք) հայան,
Իրարու ետեւ շարուան,
Հինգ հարիր մագի սարերէն թափուան.

Աղբուցան, աղջկան քով էկան,
Բոլորը առին, կայնան,
Աղբին բոլորը քարէ սալ էր,
Աղջիկը աղը սալին վրայ կը ցանէր,
Մէկ թարափէն խաւալը կը փշէր,
Մագիստանը աղի, ջրի կը կանչէր,
Մագիստանը թափուան, աղը լզեցին,
Մէկ թարափէն ջուրը խմեցին,
Աղջիկը կենէ խաւալը բերանը դրաւ,
Ինձէ փերտէն փշիւր առաւ,
Լեռան ետնիվեր օլրուաւ,
Մագիստանը իրարու ետեւ շարուան,
Աղջկան էտեր ընկան,
Աղջիկ անցաւ Մուրատ գետին կեչուտը,
Էլաւ հետիւր լեռաւ,
Հոն աղբի մի կար, վրան նստաւ,
Մի քիչ հանգչեցաւ,
Ընդուն սիւրիւ մի տեսաւ,
Օ արեցրթուն արեւատըր էկաւ,
Քիչ քիչ աղջկան մօտեցաւ,
Խաւալը կենէ բերանը դրեց, բարսէն ժիր
ժիր փշեց.

Էան մագիստան գլխին վերուցին հայան,
Պոռալէն վրան էկան,
Որը իրուր էտեւ շարուան էկան, խառուան,
Որն էալ խրկացին, փախան,
Աղջիկը խաւալը առաւ,
— Սգայ (այստեղից) էալ կորինք՝ ըսաւ,
Էլաւ ծանփայ ընկաւ,
Էրկու օր էրկու գիշեր օ ընցաւ,
Հարօղլու լեռաւ հասաւ,
Ըգկայ էալ էլաւ,
Մաստարու լեռան էալ ընցաւ,
Եօթն օր եօթն գիշեր օր անցաւ,
Բինկէօլու լեռան գլխի հասաւ,
Մուրատի ջրի ակին վրայ նստաւ,
Հաց կերաւ, ջուր խմեց, հօն կեցաւ,
Խաւալը կը փշէր,
Կէլըր նրձէղ ծաղիկ կը ժողվէր,
Քոլոզին բոլորը կը շարէր,
Մի ամիս ժամանակ օր կեցաւ,
Իրան պապական օխարը քոտոտաւ,
Մագերը թափեցաւ,
Ըռութ կաշին երեցաւ,
Ըսրց—մորթիմ, միսը չուտուիր,
Հէր ուր օր կէրթիմ, քովուս չի կլըրիր,
Էլըմ լոքցընիմ,
Տոմուրձուք լլլի վախիմ,
Իրեց ցգեց աղբին ալը,
Լոքցուց՝ դարկեց սիւրիւն մեջը,
Սիւրիւն ամեկ տեղ մի ծաղկուան
Ինքն էալ աղբին ալը կը հայէր,
Խաւալը բերնին դրէր, կը փշէր,
Մագիստանը աղջկան կը հայէին
Բոլորուն գէն չէին էրթըր,
Քսանը չօրս սահաթ ուրուշ միտք էրըց,
Խաւալը չփշեց,
Մագիստանը դատուան, հեռըցան,
Դաւարը միտքը ընկաւ,
Խաւալը կինէ բերնին դրաւ ու փշեց,
Դաւարը գլխուն վրայ թոփեց (հաւաքեց)
Հանաւ թոփալ օխարը միջուանը չէր,
Հեռըցաւ, խաւալի միջուն կը կանչէր,
— Կէլիկ, կէլիկ, կէլիկ,

Վեր տեղ ես նր էկի՛յ,
 Կէրիկ, կէրիկ, կէրիկ,
 Վեր տեղ ես նր էկի՛յ,
 Օխշարը վազեց էկաւ աղջկայ քով կայնաւ,
 Էկաւ օ մի տարուայ ուլ՝ մազերը փոխմուն
 Սե էր, կարմրեր մազերը էկեր է,
 Լեռան օխշար զարձեր է՝
 Ամեն գիւտ աղջկորը (եղջիւր) քշեր է՝
 Թիք (ուղղահայեաց) էալ էկեր է,
 Դարձեր ծառեր՝ յետին օլորուեր է,
 Վրու աղջկորը ընկնելու վրայ է,
 Աղջկեր մտածելու մէջ մտցի,
 —Էաս իմը չըլլիր, բարցի,
 Էլաւ աղջկորնուն քերթերը (յօգերը) համրեց,
 —Էաս իմ՝ օխշարը կըլլի բարցի,
 Աղբրին մէջ լորցաւ, սաղցաւ,
 Էրկու օր էտ աղջկեր գգար հիւնդցաւ,
 Վրան ետաւ թափեցաւ պտկաւ,
 Էլաւ գնըց աղբրի լորցաւ,
 Ետան սրպ սաղ էղաւ,
 Էլաւ օտաց վրայ կայնաւ՝
 Ըսըց—բս երկու օրը չիք փէէր,
 Ճաշուայ շոգուն խաւարը առաւ բերանը փռեց,
 Սիւրին օ լսեց խաւարին ձէանը՝ թօփուան,
 Մագիստանը սե էին լորցոցնը փոխուան 2
 Քուլին էալ ձերմրկան,
 —Ըսի լաւ եղաւ, բարցի տիրանը չեն ձանշնար,
 Իմ՝ մինէ առնէր էրթի:

Բ.

Աղջիկ հայեաւ գիմացուն՝
 Սիւրի մի գէպ իղինը էկաւ,
 Սիւրիւն տէրն էալ ետեանց էկաւ
 Աղջկին օ տեսաւ գլխուն խնէքն գնըց,
 Ըսըց իրան իրան—բս ինչ բան է,
 Լաթերուն օ կը հայիս, աղայ է,
 Էրեսին կը հայիս, աղջիկ է,
 —Իարե քեզ, բարցի, հովիկ,
 —Ատուռոյ բարին, չոպան,
 Աղբար, վեր տեղաց էս, բարց տղան,
 —Ես էալ չիմ գիտէր, բարց աղջկեր,
 —Անունդ ինչ է, բարց տղան,
 —Սամէլ հովիկ է, բարց աղջկեր,
 —Քու անունդ ինչ է, բարց Սամէլ հովիկ,
 —Հուլիսիկ Մուլիսիկ է,
 Ես Հուլիսիկ մարդու մինէ խեր չեմ տեսեր,
 —Սամէլ հովիկ, բարց տղան, քեզի վե՛՛՛՛՛՛՛՛
 տուեց օ առեր էաս լեռու բերի,
 —Հուլիսիկ Մուլիսիկ, լեռան էալ զո-
 րու կինես,
 —Կենիմ զորու, հրպի,
 —Քանի՛ հաղար օխշար ունիս օ զորու կենիս,
 Թող իմն էալ՝ քուսն էալ արձին,
 —Ինից հաղար սիւրի ունիմ,
 Տղեն քովէն հայեաւ տեսաւ Սամէլ հովիկը,
 Միտքը փոխեց, բարց—տեսնում էաս աղջիկ
 տի ըլլի

2 Ետաքը նետեց շնկն, օ բռնէր էրեսը պագնէր,
 Մրձան ընկաւ սիւրիւն մէջ
 —Հուլիսիկ, սիւրիւց սիւրիւյիս խա-
 նուաւ,

Գնացին հեմ ըստին՝ հեմ ընդին ընկան,
 Զատեղ չկրցան,
 Սամէլ հովիկ ուղեր խաւարով կը զատէր,
 Գնըց կիսուն կիսեց, առաւ մէ եան տարաւ,
 Տղան փոշովնաւ, —Սամէլ հովիկ, բարց,
 Թող գան, մէկ տեղ մնան, մէկ տեղ կարծինը,
 —Դու լեռու զորու կինես,
 Մէկ տեղ արձինը կըսես,
 Ես չիմ խառնէր, բու հետ արձէր,
 —Ես ետանկութին (կատակ) էրի,
 Կը խնդրուիմ քինէ, արի՛ մէկ տեղ արձինը,
 Իրարու հետ հաց ուտինը,
 Սիւրիւս տանը սեւապեցին, իրարու խառնեցին,
 Ճաշուայ շոգուն սիւրիւն ետեւողը տարին,
 Իրանը էալ աղբրին վրայ նստան, հաց կերան,
 Ըսըց Հուլիսիկ Մուլիսիկ,
 —Դուն հոս կեցիր, Սամէլ հովիկ,
 Մեր տուն մօտ է,
 Լուսուն միգի հաց պէտք է,
 Հուլիսիկը պղտի էշ մ՝ունէր,
 Խուրձինը նետեց վրան գընըց տունը,
 —Ավա, (մայր) բարց, հաց գիր փայնոցին մէջ
 օր առնեմ էրթամ:

—Դուն հէջ գալած չունէիր,
 Ի՛նչուր էղաւ օր սիւրին սեւապեցիր,
 Ամեն օր ես կը բերէի հացը,
 Հուլիսիկ, վե՛՛՛ կայ սիւրիւն տարուայ
 —Ավա, ընկեր մի գտայ տասուերկու տարուայ
 աղկէկ աղայ մի է,
 Էանուր սիւրին շատ է քանը գիմը,
 Խառնեցիք իրուր օր էտե օրթըլսէն տի կիսիք,
 Մէտքը տապակ մի հաւկիթ էփեց,
 Վրան մերզը ցանեց, խուրձինը գրեց,
 Հուլիսիկ առաւ գնըց,
 Սամէլ հովիկան հետ կերան,
 Օր մի էրկօր անցաւ, իրուր հետ սերպաստ
 էղան,

Նստան պաշայեցին լախրտու,
 Իրարու վրայ տաքցան,
 Սիւրուն մոլնուն գընըց,
 Հուլիսիկ Սամէլ հովիկան բարց,
 —Էագ ինչ ծակ փէատ է,
 Նստագ իմէար զարկուն է,
 Եսիմ, մէջը ծակ փէատ մընէ,
 Աղբրին մինէ դաւարը էրկու սահաթ հեռ-
 ցան
 Սամէլ հովիկ բարց—էրթը աղբրին վրան,
 Հուլիսիկ բարց—դաւարը տարտղան,
 Էրթը աղբրին վրայ ի՛նչ էնիք, էլլը թոփիք,
 Հուլիսիկ գընըց օ թոփէր,
 Սամէլ հովիկ գընըց աղբրին վրան,
 Խաւարը ջուրը թաղթեց,
 Բերին գրեց, փռեց,
 Մագիստանը խաւարի ձէանը լսեցին,
 Թօփուան գլխուն վրան,
 Էկաւ ձորի միջուն արծողը, աղբրին շատ հե-
 աու ըլլողը, 1

1. Այժի եղջիրներն եղնիկի եղջիրներու նման ետեւ
 կնոսձ էին:

2. Մինչեւ էն վախտը մարդ չէր գիտէր թը վնը
 մին է դրախտէն էլած ջրի աղը, Սամէլ հովիկն օ տըցուց,
 նոր իմաց էղան:

1. Աշխարհի վնայ ոչխար չկար, կասէ Մինաս աղ-
 բար, իսահակի համար ոչխար մի որ կախուեցաւ ծառէն,

Փշի մէջուն պլուողը, քարի մէջուն եղողը,
Քարի ու ծառի շուրջ պարկողը,
Հուժուժիկ դարմանք ձնը,
— Եւ իրեր սահմանուն չեմ կրնր թօփէր ըսաւ,
Էաս ինչպէս էրաւ օր թօփուան էկան,
Աղբրի ջուրը խմեցին պարկան,
Հոսի քառասունը մէկ աղբիւր կ'ըլ,
Ըն մէկն էր օ դրախաւն կեկըր,
Հուժուժիկը նշան կրներ,
Առատուն կը տեսնէ նշանը կորեր է,
Հուժուժիկ մի քարաղունիկ դարկից
Սամէլ հոգիկ ձեռքէն առաւ, դէն գրեց,
Կրակ վառեց օ տի էփեր,
Յախաւելէն մի չպուս կը յընց,
Բերրց օ շիշը զարնէ էփէ,
Հայեաւ քարաղունիկը չյախա կօլտի
Գնաց օ բռնէ, թռաւ,
Ըսրց հիմայ Հուժուժիկ կուգայ
Եւ ի նդուր աւղբնեմ,
Հուժուժիկ էկաւ քեպաղը ուղեց,
— Զարկած ավրդ վլացի թռաւ, գնրց,
— Զիմ հաւատար, դու իս կերեր, ըսրց,
— Եվ (որս) չկոյ, սիրիւյին մէջ լիբէն
Մէմէալ դարկի, առ ու էկոյ,
Ամեն օր տէր տէր քաթայ կուտէ,
— Ինչո՞ւ չուտէ, էշը խառնէ էառջիդ,
Պոչը բռնէ, կճելով գնաւ, տէյնէկով դարկի,
Հուժուժիկ գնրց, մի տէյնէկ նետեց
Զորս հատ դարկեց,
Առաւ էկաւ—առ էփէ, ըսաւ,
Զորսն էալ վլաց մէկ մէկ նետեց Հուժուժիկան
— Ես մէկը կերայ, դու չորսը կեր, ըսրց,
Վեր մին նետեց, թռան զցին,
Խաւալը առաւ, լեռան գլոյթը էլաւ,
Պաղպաղ հոգի էրեսին դարկաւ,
Ընուշ ծաղկըներուն հոտը առաւ,
Հայեաւ լաւ լաւ ծաղկըներ բացուէր էին
Զորս կողմը բռնէր էին,
Մենեմէն մի թարաւը ծաղկած էր,
Զողան դէօշէկին գետինը ընկած էր,
Մի թարաւը նարկիդ չիշէկին ձերմկած էր,
Մի թարաւը անուշ նրճէզ կար,
Հետուն հաղար չեշիտ ծաղկիներ կար,
Էան մէկէալ օր չօրը տահա զօրեց,
Հուժուժիկ—տանքը գեղի մօտը աղբիւրը,
ըսրց,
Առին զցին՝ եւթաղ էրին,
Շքորի (վայրենի տանձ) ծառին տակ նստան,
Հուժուժիկը ըսրց աղջկան,
— Սամէլ հոգիկ, մեր տունն մօտիկ է,
Էրթըր, հաց ուտիք ու գար,
— Մեր խուզիստանը կը գողնան, չիմ գար,
Դուն գնա, ինչ օ հաղը կայ, առ էկո՛ւ,
Հուժուժիկ տուն գնրց,
Մէարն ըսրց,
— Բերէիր հետդ Սամէլ հոգիկը, տեսնայաք,

— Ա՛խ, ա՛խ, ա՛խ, չեկաւ,
— Որդի, ինչու ներսէն «ա՛խ ա՛խ» կրնես,
— Ա՛խ, Սամէլ հոգիկ աղջիկ է,
— Զէ, տղաս, աղջիկը հոգիկ կըլլի՞,
— Ա՛խ, ա՛խ, ա՛խ, Սամէլ հոգիկ իլլէհի քի
աղջիկ է,
— Բերէիր, դէմն էլլալուն քիմին կը ճանշնայի,
— Ա՛խ, շատ աղկէկ է, էնանկ աղկէկ է,
Օ աշխրբին մէջ չգտնուիր,
Տղաս, էադոր զոլային գիտեմ,
Հիմայ փիլաւ մը կեփեմ,
Փիլաւը էփեց մէարը, լցեց սթըլին մէջ,
Շերեփ մի մրճան, շերեփ մի ալմաստ լեցոց
մէջը,
— Հուժուժիկ, ըսրց, կը տանէք նստէք կու-
տէք,
Էկը Սամէլ հոգիկ մերձըներ ու ալմաստներ
ժողուեց, աղջիկ է,
Զէ օր նետեց, տղայ է,
Հուժուժիկ առաւ փիլաւը էկաւ աղբիւրն վրան,
Նստան Սամէլ հոգիկան հետ կերան,
Սամէլ հոգիկ, գրգալը դարկեց օ բերանը տի
տանէր,
Մի գդալին քսան քար կը թափեր,
— Հուժուժիկ, ըսրց, Սամէլ հոգիկ,
Ինչ փնթի մէար ունիս, օ սալթ քար
է էփեր,
Տահա ինձի չրսիս թէ էրթը տուն,
Ըսրց զաղարին—էլի սիրիւն խառնէ,
Ամեկ դի մի հանէ,
Զաղարը վաղեց, սիրիւն խառնեց,
Ամեկ դի մի հանեց,
Աղջիկը ըսաւ,
— Հուժուժիկ, գեալը սիրիւին մէջ ընկաւ,
Հուժուժիկ վաղեց,
Սամէլ հոգիկ ալմաստ քարերն ու մերձները
ժողուեց,
Ինքն էալ սթըլը (փոքր պղնձէ աման) առաւ,
վաղեց,

— Էադ ինչ տի ըլլի՞ ինչ է,
Հուժուժիկ, դէալ է, դը չէ արջ է,
— Սամէլ հոգիկ, գէալ, արջ ըլլիլը չգիտցայ,
Նէա փորսուխ, Նէա սամնայ ըլլիլը գիտցայ,
Աջիցս մի էրեաց, խայալ էղաւ,
Խոտերուն մէջ կորաւ,
Սիրիւն դարկին կայալանու, բարսը տեղ մի
նստան,

Գ.

Օլորուա մէկէալ օրը կրնէ զօրեց չօրը,
Էկան աղբիւրն վրան,
Զուր խմեցին, հաց կերան պարկան,
Հուժուժիկ էլաւ, կերթմ, հաց բերիմ ը-
սաւ,
Ըսրց Սամէլ հոգիկ,
— Մէարդ մէթ կրնիս (կը գողնես), Հուժուժիկ,
Էրեկ փիլաւ մ'էր էփեր, պիթուն քար էր,
Աստուածդ օ կը սիրես,
Էրեկուան փիլաւէն չրերես,
Օր տի բերես հէջ մէրթը,
Հուժուժիկ տուն էկաւ,
Մէարը ըսաւ,

որոյ երկու ուղորուն եղիւրնեղու մը մտած կար խաւալը
(սրինգ), խաւալի առաւ փնց, որոյ քաղցը ծայրը դրախտի
մէջ գտնուած ոչխարներն երբ լսեցին, լացին, որով ոչխար-
ներն չորս աչք ունէին, երկուքն փծացան եւ հետեւելով
սրինգի ծայրին դրախտէն դուրս ելան, տարածուեցան Բին-
կէօի լեռներու վերայ, ուստի եւ աշխարհ:

— Լուծութիւն, որ ամուր կը յնկէ, էադ ինչ է.
Պէնկզդ կը հայրմ փոխուէր է.
— Այն, ամա, Սամէլ հոյիկ աղջիկ է, որ աղ-
ջիկ,
— Լուծութիւն, երեկ էան քարերերը օ ժո-
ղուեր է,
Գու ըսածդ է, Սամէլ հոյիկ աղջիկ է.
— Այն, կը ժողուէր կը նետէր,
«Մէարդ փնթի է, կըսէր»
— Լուծութիւն, ես չըսի՞ օ տղայ է,
— Այն, ամա, Սամէլ հոյիկ աղջիկ է, օ աղջիկ,
Այն Սամէլ հոյիկ, ախ Սամէլ հոյիկ,
Լուծութիւն հէարը էրկու խոս պողչա ունէր.
Մէկը տան վեր դին մէկէալը վէար դին էր.
Մէկը կիւլի, մէկը ծաղիկ պողչայ էր,
Մէկը հոտուն ծաղիկներ լեցուն էր,
Մէարը ըսըց— Լուծութիւն, տղաս.
Էգոր ըստան կը գընըմ ես.
Գընըց հինգ չէշիթ վարդ բերց.
Էրկու թապախ մէջ լեցոց,
Վրան էրկու այլիս ձգեց ու Լուծութիւնայ
ըսըց.
— Լաց նօ կերաք մէկը գու վրան կընտարս,
Լուծութիւն,
Մէկն էալ թող նստի Սամէլ հոյիկ,
Օ Սամէլ հոյիկ ըսըց «չիմ նստիր»
Գու ըսա՛ «մէարս թէնայէ է էրեր,
Մի սահաթ տի նստիք օր թէ,
Սամը (խորշակ) չղայ ձեզի գինէ»,
Սահաթ մ'օր թէ նստաք.
Էրկուքդ էալ վրուն կըլլաք,
Սամէլ հոյիկան տկունը թէզ թողմերէնը,
աղջիկ է,
2է, էրկուքդ էալ մէկ թողմեր է, տղայ է,
Լուծութիւն հացը վարդը առաւ.
Գընըց Սամէլ հոյիկ հասաւ,
Հացերնին կերան,
Թապախնին շտկեցին, վրան նստան.
Աղջիկը իմաց եղաւ օ իր տկունը չորցաւ.
Ձաղարին լեզուօքը ըսաւ.
Ձաղարը էան լըմանը ընկաւ սիւրիւին մէջ,
Էան լըման ամէկը մէկ եան տարտղնեց.
Ըսըց աղջիկ— գէալը սիւրիւին մէջն է ընկեր,
Լուծութիւն, իմ օտքս է թմրէր,
Լուծութիւն կ'աղեց,
Սամէլ հոյիկ թապախները փոխեց,
Լուծութիւն իմաց չեղաւ,
Թապախնին վրայ էկաւ նստաւ,
Սամէլ հոյիկ ըսաւ.
— Լուծութիւն, ինչ էր գաւարը իւրբմիշ (իւրբ-
տն) էղաւ,
— Դը իսիմ, Սամէլ հոյիկ, ինչ է.
Մէկն օ փոնգապայ, իւրբմիշ կըլլին մէկը մէկին
մինէ,
— Ճուտ թմրաւ, էլլըք, ըսըց Սամէլ հոյիկ,
Էկը գէրման էր նը է հերիք,
Լուծութիւն հայեաւ, աղջիկան տկուն պալարտ է.
Իրան տկունը չորցեր է.
Մէկէալ օրը մէարը կինէ տեսաւ.
Օ Լուծութիւն շատ մաշուաւ
Ըսըց, — Լուծութիւն, տղաս
Էադ ինչ է օր աւուր վրայ կանցնիս (մաշուիլ),
— Այն, ամա, ես ինչ ըսիմ,
Սամէլ հոյիկ աղջիկ է օ աղջիկ,

— Վարդ տարիր նը ինդուր էղաւ,
— Իմ տկունը չորցեր, էանուր տկուն պա-
լարտ էր,
— Բօշ տեղը «ախ» մի քաշեր, Լուծութիւն,
Տղայ է Սամէլ հոյիկ.
— Տղայ չէ, ամա, իլլէհի աղջիկ է,
Ինդուր էալ աղջիկ աղջիկ է.
— Տղաս, քիզի բան մէալ ըսիմ,
Հետդ հաց կը գնիմ,
Հացը աղբրին վրայ չուտիք,
2այի (գետ) վրայ կուտիք.
Կէլլըք խուղիստանը ջուրը կը թափէք,
Մէկ մէկ կը լըքցնէք,
Տկողնաք ջուրը կը մնաք
Ամէկը մէկ մէկ կը վըլաք.
Մէկդ շլլոցը կը բռնէք,
Մէկդ կը լըքցնէք,
Օ տկողցաւ, ծծկուուն, ծամկուուն մինէ
իմաց կլլիս, տղայ է գը չէ աղջիկ է,
Լուծութիւն գնըց, Սամէլ հոյիկան ըսըց,
— Մէարս թէնայէ (պատուէր) էրեց,
«Խուղիստանը կեղտոտ ին, տի լըքցնէք», ը-
սըց,
Աղջիկը գնըց մաղերը քոքուն ըսում էրեց
էկաւ,
Շապիկը վրուն չհանց, ջուրը մտաւ.
— Շապիկը հանէ, Սամէլ հոյիկ,
Ըսըց Լուծութիւն,
— 2իմ հանիր, ջուրը պաղ է,
Խուղիստանը լուացին, էլան
Հալաւին հաղան,
Իմաց չեղաւ Լուծութիւն,
Սամէլ հոյիկ տղայ է թէ աղջիկ,
Սալտ մարմինը տեսաւ, եղի պէս հալեցաւ,
Մէկէալ օր գնըց տուն նստաւ,
Այն ախ ախ, ախ ախ ախ, էրաւ.
Մէարն էալ Լուծութիւն հալը տեսաւ,
Նստաւ, լացաւ, ըսաւ, — Տղաս, վայ, վայ,
վայ,
Լիր մի եղդ հալեցաւ էրեկուայ վրայ,
Այն ամա, գուն իմ տեղը ըլլէր,
Օսկորնիդ էալ կը մաշէր,
Իմը լիր մէ հալեր, քուկը հինգ լիր կը հա-
լէր,
— Տղաս խուղիստանը լըքցուցիք,
Իմաց չեղաւ տղայ է գը աղջիկ,
— Շապիկը չհանց, ամա,
Ըսըց «ջուրը պաղ է,
— Տղաս, քու խոքդ է, Սամէլ հոյիկ աղջիկ է,
Հացը կաննէք կերթաք,
Այն գէրէսին (խնձորաձոր) կիջնաք,
Սիւրին կը խառնէք չայիրը,
Դուք էալ կէլլըք խնձորի ծառը,
Դուն կարմիր խնձորներ կը նետիս,
— «Էստ ինչ փնթի է կըսիս»,
Կանաչները կը ժողուիս,
«Ինչ աղէկէ է», կըսիս.
Տես, էան ինչ կինէ, քիզի ինչ գուր կըսէ,
Ինդուր խնձոր կը ժողուէ, ինդուր կը պէյէ,
Էան լման ալմա տէրէսին գըցին,
Դաւարը ձորնը դարկին,
Իրանք էալ ծառներուն տակ էկան
Կենտի կէլէն (ինքն իրան աճող) խնձորնուն
վրան էլան.

Հուժուժիկ կարմիր խնձորնին ժողուեց, նե-
տեց,

Տղան աչից տկուն կը հայեր,

Օ Սամէլ Հովիկ գողտուկ կը ժողուէր,

Կինէ իմաց չեղաւ—ըստե բան մի կայ, ըսաւ.

—Սամէլ Հովիկ, ըսցի, Հուժուժիկ, արի
Համրինք.

—Հարիր հատ է, ըսցի Սամէլ Հովիկ, ինչ
Համրինք.

—Արի հայինք, ո՞րին աղկեկ է.

—Էրկունն էալ մէկ է, հայէ.

Հուժուժիկ հայեաւ, օ կանանչ է,

Ինչ օ երեսը շարուած է.

Տակն արի հայեր, Կրճան կիւրիւթի հանեց,

Էան լման դաւարը խառնեց.

Հուժուժիկ—սգա էալ բան մի չեղաւ ըսցի,

Կինէ մտածոց մէջ մընրցի,

Մէկալ օրը ալլա հացի գնրցի,

Մէարը ալլա Հուժուժիկայ հարցոցի,

—Իմաց չեղար Հուժուժիկ,

Աղջիկ է թէ տղայ Սամէլ Հովիկ,

—Ախ, ալա, աղջիկ է օ աղջիկ,

—Աղջիկ է նը ինչուր երեցի,

Պարմիրնին դը չէ կանանչնին ժողուեց,

—Ախ, ալա, աղջիկ է օ աղջիկ,

—Կրսիս աղջիկ է, չըսիս ինչուր երեցի,

—Ինչուր երեցի,

Ինձի հեշ ցունց չտուեց,

Էտե հայեցի օ երեսը կանանչ է,

—Հուժուժիկ, եզուց չայր կերթըք,

Հանուիք կը լոքնաք,

Օ շապիքը չհանեց, դէն կը քաշես,

Ծիծերը կը հայիս,

Հուժուժիկ հացը տարաւ,

Նստան, կերան, էլան.

—Չայը մտնիք, Սամէլ Հովիկ, լոքնաք, ըսցի
Հուժուժիկ.

—Ես անդա նոր լոքցայ, ըսցի Սամէլ Հովիկ.

Հուժուժիկ պաշլայեց արի քաշիլը,

—Ինչո՞ւ արի կը քաշես, ըսցի Սամէլ Հովիկ.

—Բան չկայ, ըսցի Հուժուժիկ,

Հուժուժիկ ալլա տուն գնրցի,

—Ալա, թէզ հաց տուր, ըսցի,

Մէարը հայեց տղի երեսին, վախեցաւ,

—Էստ հէջ հալ չունիս ըսաւ.

Տղաս, դուն կեցիր տուն, մերթը մաքիստա-
նուն,

Չարա չեղաւ, թէզ առաւ գնրց Հուժուժիկ.

Տեսաւ ջուրը մտեր կը լոքնաք Սամէլ Հովիկ.

Հացը թէզ մի ձեռքէն նետեց,

Լաթերը հանեց ինքն էալ վաղեց.

Սամէլ Հովիկ Հուժուժիկայ տեսաւ,

—Չաղար, եզի դարերնիս է ըսաւ,

Քու տուն չքանդուի, Կրճան

Սիւրուն ամէկ տեղ մի տար,

Չաղար սիւղիւմիշ (սլացաւ) էզաւ,

Դաւարը կիսեց ամէկը մի եան տարաւ.

Սամէլ Հովիկ թէզ մի հագաւ,

Օխչին մէջ հասաւ,

—Քու տուն չքանդուի, Հուժուժիկ, ինչ էս
կեցեր,

Գէալը օխչարն է տարեր,

Թէզ հագուէ, էտեուն վաղէ,

Հիմայ տանի կուտէ.

Հուժուժիկ՝ արի արի՝ աւելցուց,
Մաօքը անցոց, «Հըպի ես ինչ էնիմ»,
Սամէլ Հովիկայ սիրուն արի մեռնիմ.

Պ.

Եթմիշ բարա՝ մի կար Բինկեօլու էր,
Տարին երկու հեղ կուգար մաղիստանը կը
կնտէր.

Բուրդը տանէր, Եարպէրի կը ծախէր,

Փարան բերէր, Հուժուժիկայ կուտար,

Հուժուժիկ եօթը տարի փարան պէյեց,

Սամէլ Հովիկայ հիսէն չտուեց,

Սամէլ Հովիկ միտքը ծռեց,

Հուժուժիկայ մինէ բաժնուիլ ուզեց,

—Գնա, հաց թէզ առ եկո՛ւ, ըսցի Սամէլ Հովիկ,

Էստ օր պաղար է, ես կերթմ պաղարը,

Էստ օր չորեքշաբթի է, պաղար կայ,

Էրթմ տեսնըմ պաղարին ինչ կայ,

Սամէլ Հովիկ թէզ գնրց պաղար,

Մէկ ջուխթ երկրթէ չարիս առած էր,

Քառսուն խալիպ սապոն առած էր,

Մէկ տէստէ ածըլի առած էր,

Մի օխա դժնիկի փշի ունց առած էր,

Մի բարչ դէթուն ետղի առած էր,

Էրկու հարիր փալութ առած էր,

Պաղարէն մի մարդ էալ հետը բերած էր,

Էստ մարդը իրանց երկրացի էր.

Էկաւ—բարե քիդի, ըսցի, Հուժուժիկ.

—Աստըծու բարին քիդի Սամէլ Հովիկ.

—Էստ ինչ մարդ է.

—Պապս ճանիք. սիրիւին կէսը կուզէ.

«Մէք ցամաք իք» կրտէ.

Էկո՛ւ, Հուժուժիկ, սիւրուն կիտէր,

—Չիմ կիտէր, ըսցի Հուժուժիկ.

—Չիս կիտէր նը սիրիւն թող մնայ ես կերթմ:

—Չէ, չէ, Սամէլ Հովիկ,

Եօթ տարի է իրուր հետ կը նստիք կայնիք.

Սիւրուն քուլլին թող տանին,

Մենք իրուր հետ մընրք,

Սիրիւին կէսը կիսեց աղջիկը,

Խառնեց էան մարդու անաջ ճանիքեց,

Իրանք մի ամիս երկու ամիս մնացին,

Մի օր՝ Հուժուժիկ, ըսցի—Սամէլ Հովիկ,

Եկո՛ւ երթըք աղբրին վրայ նստիք.

Հուժուժիկ արի արի էրաւ, քնաւ.

Սամէլ Հովիկ մի սահաթ դաւուն մինէ հե-
ռըցաւ.

Բերնին դրեց խաւալը,

Պաշլայեց մաքիստանուն կանչիլը.

Մաքիստանը խաւալին անուշ ձէանը լսեցին,

Գլխընին զեանէն կը լրեցին,

Իրարու էտե շարուան

Պոռալէն էկան,

Սամէլ Հովիկայ մօտ ժողուան.

Սամէլ Հովիկ էստ լեռատանը աղ ու հաց էր
կերեր,

Էրթալու էր, էշխով կը փչէր,

Օ լեռա ու լեանջ ժաժ էր էլեր,

Քար, ձոր, գէալ, արջ էլած ին,

Խաւալի ձէանին թամաշա կենին.

Քարերն կը զլտրտէին,
Խաւարի ձէանին կուգային.
Պաշլայեց աղջիկը խաւարի ձէանը բարսընեն,
Վազուն ջուրը կայնաւ, վէարդին չորցաւ,
Տղան աղբրին վրայ խաւարին ձէանը կը լսէր,
Նստած տեղը պարած մնացեր կուլար.
Այլա աղջկան էշինէն պարկաւ,
Քունը տալմիշ էղաւ.
Սամել Հոփիկ խաւարը զարկեց մէջքը,
Խուրճինը նետեց փնէր,¹ էլաւ բարս սրբթը.
Հայեաց օ տղան թմարմուն է՝
Ըսրց.— աղ ու հաց ի՞նչ կերեր ըս եօթ տարի,
Երթնցնեմ Հուծութեան մեղք է,
Պաշլայեց խաւարի միջով ձէան տալը,
Հուծութեան կանչիւր.
— «Մընքս բարի Հուծութիկ, ջան Հուծութեան թիկ»

«Մընքս բարի Հուծութիկ, ջան Հուծութիկ»
«Եօթ տարի է իմ աղջիկը ըլլելը չգիտցար»
«Ես քու մինէ ինչ տի հասնեմ»
Տղան արթնացաւ հայեաց.
Օ աղջիկ լեռան գլու հասաւ.
— Ափուցս ինչուր տի փրթիս ըսաւ.
Էլաւ վազեց էտեէն.
Հա՛ էրաւ օ աղջկան տի հասնէր
Ըսնէր ետ դարձնէր,
Ըսաւ Սամել Հոփիկ,
— Իմ մինէ վազ չգար Հուծութիկ,
Հաղիս լեռնը օ էլաւ, աղջիկը հեռացաւ,
— Մի գար, Հուծութիկ, Մուծութիկ,
Լեռան գլխու օխշարը վէար էրէ,
Միւնքիւն է՝ տղան տնկուաւ եօթուշը,
Աղջիկը փախաւ, հաղիս արշուն մի մինքն օ
բունէ.

— «Իմ ափուցս ո՛ւր տի փախիս»
Ըսրց Հուծութիկ, օ փրթիս,
Աղջկայ չարան կը յրաւ դժնկի հունգը թափեց,
Լեռա ու լեանց դժնկի փուշ կը յորուաւ,
Աղջիկը խէլի հեռացաւ,
Տղեն էալ փշերու միջուն հա խալըսելու եղաւ,
Կենէ մօտեցաւ.
Աղջիկ սապոնը նետեց, լեռա ու լեանց սապոն
կը յրաւ.

Տղեն հերքի օտքը կը նետեր,
Չէր կրնր ստաջ էրթը,
Սապոնէն խրլւաւ, կինէ մօտեցաւ,
Աղջիկը փայլով գլեց,
Գետինը օրման կը յորուաւ,
Տղան օրմանէն խրլւաւ աղջկան մօտեցաւ.
Աղջիկ ածիլեստանը թափեց,
Աշխարհ ածիլի կը յորուաւ,
Տղի օտնը կը յրեց,
Տղան ինչու ածիլեստանուն խրլւաւ,
Աղջկան մօտեցաւ,
Աղջիկ պաճը՝ ձգեց պիծուն աշխար պաճ
գարձաւ.

Տղան օ կոխտեց կսկիծը ձիկերը կը զիներ,
Աղջիկը իրա հողը Մալաթիա բնկաւ,
Աղջիկը հայեաւ օ չկրնր խալըսել լեցոց ջուրը,
Եղաւ Մալաթիոյ մեծ չայը,
Տղան բնկաւ լողը,
Հաղիս տղան էկաւ ջրին քնարը (կըրը).

Աղջիկը մտաւ իրա տունը՝ տղու աշիցը կորաւ.
Տղան շուարաւ կայնաւ.
Չրդիտէր վեր մի թարաւը էրթալ, մի չարայ
գտնայ.

Վէար առաւ քօլոգը,
Չեառքը բացեց դէպի էրկինքը,
— Կը խնդրուիմ, հայր երկնաւոր, ինձիս,
Սիրուն ճնճուղ մի ինիս,
Թոնիմ՝ էրթամ, էնոնց գետրթին պատին վերայ
էջնամ.

Ըստուած ձէանը լսեց, ճնճուղ մի էրեց,
Թեւ տուեց, թուա գընըց,
Էնոնց գետրթի պատին վրայ էջաւ,
Աղջիկը գընըց տուն, լաթերը փոխեց, նստաւ,
— Բըրուրտիք, ծարաւ էմ ըսաւ,
Էրկու քօրն էալ էլան գլին ջրի,
Տեսան գետրթին պատին վրայ ճնճուղ մի կայ,
Էանանկ աղկեկ ճնճուղ աշխարհը չըկայ.

Կը կարնէ պիւլպիւլի պէս,
Ըմեն բռանկը փրսն կայ,
Աղջիկներ կեցան թամաշայ,
Ճնճուղը պաշլայեց խօտալը,
Խօտալ խօտալ թեւերը թափտալը.
Մէկ քօրը ջուրը տուեց.

— Էսս ջուրը շատ տաք է՝ ըսրց,
— Բին կեօլու պաղ ջուրը սորովես
Էսս ջուրը կը խմես,
Մէկէալ քուրն էկաւ, քրոջ ըսաւ.
— Գետրթի պատի վրայ ճնճուղ մի էկեր է՝
Էանանկ աղկեկ է՝ օ աշխրքի մէջ չկայ,
— Դու գցէր տեսէր օ չէր տեսեր,
Բինկեօլու վրայ ես շատ եմ տեսեր,
Էան գնըց մէկէալ քօրը էկաւ.
— Ըստուածդ օ կը սիրես, էլի հայէ ինչուր
ճնճուղ է.

Սամել Հոփիկ օ դուս էլաւ,
Ճնճուղը թուա թեւէն բունց,
Կանկը նետեց, առաւ գընըց,
Քուրուրտանըր էտնուն պոռպոն,
— Քուրուրի եօթ տարի ըլլ տղի հետ չըրուցիս,
Լալ էղաւ, եօթ տարի չըրուցեց,
Հուծութեան մէարը տեսաւ, ըսաւ.
— Ըսի Սամել Հոփիկ չէ՝ կաղիլիս բերեր,
— Այլա ըսոր չարան դու տի գտնիս, ըսրց
Հուծութիկ.

Մեծ զատկին իրեր հատ հաւկիթ էփեց,
Կարմիր, դեղին, կանանչ ներկեց, տղոց զրկեց.
Տղաք իրուր խառուան, պաշլայեցին կոխը.
Հուծութիկ դուսն էտնուն մօտիկ կինէր,
Տղոց մէարը հերստաւ, ըսրց,
— Չեր մաման օ լաւ ըլլեր,
Մէկ չէշիտ հաւկիթ կը բերեր,
Հուծութիկ լսեց, վազեց,
Ըս եօթը տարի է՝ իմ մուրաղը ինչու իմ
փորը թողիւր, Հոփիկ,
— Դու քուրուրտոցս եօթ տարուայ մուրաղը
փորը թողիւր.

Էանոր համար պարանպար տի ըլլեր,
Հէարս մէտեր մէարս պառապ է՝
Քուրուրտանքս անտէր ին,
Պէյիսնը քեղի հետ կը պսակուիմ.

1. Կարմիր աղպեղ.

1. Բինկեօլ տուն մի կայ որ Մալաթեցոնց տուն
կասուի:

Հուլիսի 1-ին Սամել Հովհան Բաբեր Բաբեր-
տունքը առաւ էլաւ:

Բինկեօլայ 1 զեղին մէջ կարգեց,
Կանէնց Արախայ Գրիգոր Կարեկացին,
Եկան Հուլիսի 1-ին ու Սամել Հովհան Բաբեր
փառօք պահեցին:

Սամել Հովհան մի թոփալ օխշարով Բինկեօլ
էլաւ:

Եօթ տարուն Եօթ Հաղար մագու տէր էլաւ:

Ս. Հայկունի.



ՄԱՆՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

ՀԱՄԱՐԱԿԱՆ ԴՈՒՐԵՐ.

Աւագակներն իտալիայում. — իտալացի
նշանաւոր ընկերաբան (Sociologue) եւ ոճբագետ (Crimi-
naliste) Սթեֆան Սթեֆան մի հետաքննարկական հետազո-
տութիւն է նուիրել իւր հայրենի երկրում գոյութիւն ունե-
ցող ներկայ աւագակային խնդրին: Իտալիան միշտ դարե-
րից սկսած յայտնի է իբրեւ «քանդակների» (աւագակնե-
րի) երկիր, ուր նրանց մի որոշեալ աստիճան յարգանք
անգամ վայելել են զանազան ժամանակներում:

Աւագակային դրութեան ծաղկման միջոց նպաստաւոր
է երկրի բաժան բաժան վիճակը, իսկ իտալիան այդ թըշ-
ուառութիւնը երկար ժամանակ է ունեցել: Մանր երկրների
տէրերը, որոնք անսահման պէտքեր ունէին իրենց իշխա-
նական փայլը պահպանելու համար, կեղծել են միշտ ի-
րենց հպատակներին, որոնցից արիասիրտները խոյս են
տուել լեռներն ու անտառները եւ անձնական քաջութեամբ
ազատուել իրենց հետամուտ իշխանութիւններից, որի ձեռ-
քից ազատուելու համար մօտաւոր օտար սահմաններն միշտ
ապահով ապաստանարաններ են եղել: Այս վիճակը վերա-
ցաւ իտալիայի միութեամբ, սակայն աւագակութիւնը դեռ
եւս ծաղկում է պնտել: Լրագիրների մանրաւորներին հե-
տեւողները տարին մի քանի անգամ կը հանդիպեն իտա-
լիացի յանդուգն քանդակներին, որոնք իրենց զորքերի նկարագրու-
թեան: Քննելով սրա պատճառները իտալացի գիտնականը
երկու գլխաւոր արգելքներ է գտնում աւագակութեան
ոշնջացման խանգարող, մէկը հասարակութեան ձեռնտու-
թիւնն է, իսկ միւսը մահուան պատժի վերացումը: Բնորոշ
օրինակներից երեւում է, որ աւագակութիւնն եւս յառա-
ջագիծն է իտալիայում, այսպէս աւագակներից մէկը Տի-
բուրցի անունով օրինաւոր տէր է երկրի, նա իւր գա-
ւառում հարկ է դրել հարուստների վերայ եւ տարեկան մի
քանի հազար ֆրանկ ստանալով հողում է իւր պաշտպան-
եալների ապահովութեան մասին: Վիճակագրութիւնը ցոյց
է տուել, որ այդ աւագակի գաւառում ոճբագործութիւնը
պակսել է Տիբուրցիի այդ սխտւմի շնորհիւ: Գովապի աւա-
գակները դեռ ընն հասել այս կէտին, ապա թէ ոչ. նաքի-
ների, զոհների թիւը կը պակսէ:

ԳՈՒՏԵՄԲԵՐԻ ԵՐԵՆԵԱՆԸ.

Մօտերումս ցանկութիւն յայտնուեցաւ հանդիսաւոր
կերպով տօնելու Յով. Գուտեմբերգի ծննդեան 5-հարիւր-
ամեակը եւ առաջարկուեցաւ տօնախմբութեան օրը համարել
1897 թիւը, սակայն տպագրութիւն մեծ հարողի ծննդեան
տարուայ մասին ճշգրիտ տեղեկութիւններ պակաս տու են
ունենալ 1597-ն են համարում ուրիշները 1598-ը: Այդ հանգ-
ամանն ի նկատի ունենալով Լօնդոնի Աթէնէոս հանդէսը
լաւագոյն է համարում վերոյիշեալ տօնախմբութիւնը կատա-

րել 1900-ին, ենթադրելով որ քսաներորդ դարու ա. տարին,
կարող է մեծապէս նպաստել հանդէսի միջազգային քննա-
րութիւն ստանալուն:

Գ. ԲԱԿԱՆԱԿԱՆ.

Պետաւորացիի գրուածքների հրատարակել Ձէյֆեր-
տը մօտերումս ուղեւորուել է Չուիցերիա այն դիտաւորու-
թեամբ որ աշտ անցկացնէ հռչակաւոր մանկավարժի դեռ
եւս չը հրատարակուած նորագիտ թղթերն ու նամակները:
Ձէյֆերտի կարծիքով Պետաւորացու նամակներից երկուսը
առանձնապէս հետաքննութեան արժանի են: Գրանից մե-
կում Պետաւորացին խօսում է իւր աղքատների համար
բաց արած ուսումնարանի մասին՝ միւսի մէջ, որ ուղղուած
է վատքի կանտօնի կառավարչին, նա մանրամասնօրէն
պարզում է իւր մանկավարժական սիստեմի հիմնական
սկզբունքները: Եռտուվ այդ վաւերացումները ի լոյս կնծայ-
ուին: Վերոյիշեալ կանտօնի դիւանում նորերս գտնուել է
Պետաւորացու կտակը:

Նոյեմբեր 22-ին անգլիական գրագետների շքանշե-
րում մտադիր են տօնելու Թօմաս Կարէյլի ծննդեան
100-ամեակը: Այդ օրուան համար կը տպագրուէ Կարէյլի
պատկերազարդ կենսագրութիւնը:



ԱԶԳԱՅԻՆ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԵՆ ԲԱՐԵԶԱՐԴՈՒ-
ԹԻՒՆ.

Քաղաքակրթութեան առաջին նշանն է
բարեկարգութիւնը, որին իբրեւ պսակ պիտի
հետեւի բարեգարգութիւնը: Աթէ որեւէ ազ-
գի կամ որեւէ ժողովրդի հասարակութեան
արտաքին կեանքի համար անհրաժեշտ է բա-
րեկարգութիւնը, որչափ ևս առաւել անհրա-
ժեշտ է այդ նրա կրօնական կեանքի համար:
Սրբութեան տաճարի մէջ եթէ պակասի բարե-
կարգութիւնն և բարեգարգութիւնը, նա կը
կորցնէ իւր վեհութեան մի մասը, ուստի և
իւր ազդեցութիւնը կը նուազի: Հայերս միշտ
նախանձախնդիր ենք եղել մեր հայրենաւանդ
ս. եկեղեցու բարեկարգութեան և բարեգար-
գութեան: Աթէ թշուառութիւնը խլել է մեզ-
նից բարեգարգութիւնը, մենք աշխատել ենք
զոհէ բարեկարգութեամբ փայլեցնել մեր ս.
տաճարները: Այդ բարեկարգութեան վերա-
հասկնալ եղել է միշտ թէ մեր եկեղեցականու-
թիւնը և թէ ժողովուրդը:

Ա երջին ժամանակներս մեր ս. եկեղե-
ցին խրթնացել է իւր բարեկարգութիւնից
մեր ս. տաճարները զրկուել են իրենց բարե-
գարգութիւնից և այդ երկկողմի զանցառու-
թեամբ:

Ակեղեցականների մի մասի տգիտութիւնն
և ժողովրդի ընդհանուր անտարբերութիւնը